Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
փետրվարի 14-ի նիստի N 6
արձանագրային որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՁՍՊՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Կատարման ժամկետը
1	2	3	4
1. ««Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կենսաթոշակների, պետական նպաստների, դրամական օգնությունների և այլ վճարումների նշանակման և վճարման գործառույթները մեկ պետական մարմնի վերապահումը, պետական նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերի հստակեցում, սահմանելով դիմումների միասնական ընդունարանով ներկայացնելու կարգը, ինքնաշխատ եղանակով տվյալների ստացման հնարավորությունը՝ բացառելով նպաստառուի և մասնագետի անմիջական շփումը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ապրիլի 3-րդ տասնօրյակ
2. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Պետական նպաստների, որպես սոցիալական ծառայության առանձին տեսակ, հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով: Ինտեգրված սոցիալական ծառայությունների, այդ թվում պետական նպաստների, տրամադրման ընթացակարգերի հստակեցում՝ համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների ստեղծման (այդ թվում միասնական ընդունարաններ), դրանց գործունեության, լիազորությունների իրավական հենքի առկայություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	հունիսի 3-րդ տասնօրյակ

3. «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընտանիքների անապահովության գնահատման՝ սոցիալական խմբերի ճանաչման, եկամուտի (աշխատավարձ, թե գյուղատնտեսական եկամուտներ) հաշվարկման մեխանիզմների, պետական նպաստների նշանակման և վճարման կարգերի, համակարգում հաշվառված անձանց մասին ՀՀ նախարարություններից, գերատեսչություններից և կազմակերպություններից ստացվող տեղեկատվության, դրա ներկայացման ձևի, պարբերականության վերանայման արդյունքում տեղեկատվական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացմամբ ավելի հավաստի տվյալների ստացում՝ առանց դիմողից փաստաթղթեր ներկայացնելու պահանջի	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և համապատասխան նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ	հունիսի 3-րդ տասնօրյակ
4. ընտանիքների անապահովության գնահատման համակարգի և ՀՀ ԿԱ ոստիկանության ԱՎՎ տվյալների համադրելիության մակարդակի բարձրացում՝ հանրային ծառայության համարանիշի կիրառմամբ	ընտանեկան նպաստների համակարգի հասցեականության, ընտանիքի կազմի որոշման և տեղեկատվության ստացման արդյունավետության բարձրացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ ԿԱ ոստիկանություն	հունիսի 3-րդ տասնօրյակ
5. ընտանիքների անապահովության գնահատման համակարգի և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի օտարման գործարքներով սեփականության իրավունք ձեռք բերողների, հողի սեփականատերերի, հողը վարձակալողների մասին տվյալների համադրելիության մակարդակի բարձրացում՝ հանրային ծառայության համարանիշի կիրառմամբ	ընտանեկան նպաստների համակարգի հասցեականության՝ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի և դրանց մակերեսի, դրանց կադաստրային զուտ եկամուտի չափի մասին տվյալների որակի և ստացման արդյունավետության բարելավում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	հունիսի 3-րդ տասնօրյակ
6. Յուրաքանչյուր տարվա հունվար ամսին համայնքում անասնահամաճարակային միջոցառումներ իրականացնող անասնաբույժի կամ համայնքի անասնաբուժական ծառայություն իրականացնող անձի հետ համապատասխան պայմանագրերի կնքում և նրանց նյութատեխնիկական բազայի բարելավման մասին առաջարկության ներկայացում ՀՀ	ընտանեկան նպաստների նշանակման բնականոն ընթացքի ապահովում և անասնապահությունից ստացվող եկամուտի մասին տվյալների որակի և ստացման արդյունավետության բարձրացում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	փետրվարի 2-րդ տասնօրյակ

կառավարություն			
7. տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության (պետական նպաստների, կենսաթոշակային ապահովության, զբաղվածության, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բնակչության պետական ռեգիստրի, անշարժ գույքի կադաստրի և այլ (ըստ պատրաստվածության մակարդակի) տեղեկատվական բազաների միջև) միասնական համակարգի ներդրում	տեղեկատվության համադրելիության բարձրացում հանրային ծառայության համարանիշի կիրառմամբ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
8. Ուսումնասիրությունների անցկացում ռիսկային համարվող համայնքներում և վարչական շրջաններում	ընտանեկան նպաստի նշանակման և վճարման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացում	ՀՀ ֆինանսների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ	հուլիս - դեկտեմբեր